

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ԱՐԱԲԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԱՆԳԼԱԼԵԶՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ -1, 2

ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՁԵՆՆԱՐԿ

Դասիչ՝ 1802/02

1802/04

Կիսամյակ՝ 2-րդ և 3-րդ

Կրեդիտ՝ 9

Հեղինակ՝
Բ.Գ.Թ. , դոց Ռուբեն Միրաքյան
2014/2015 ակադ.տարի

Համառոտ տվյալներ դասախոսի մասին

Դասընթացը վարում է՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Միրաքյանը
Դասընթացի հարցերով հաղորդակցության միջոցները՝
Փոստային հասցե՝
Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական
համալսարան, արևելագիտության ֆակուլտետ,
արաբագիտության ամբիոն
Էլ. փոստի հասցեներ՝
Ռուբեն Միրաքյան՝ ruben_mirakyan@ysu.am;
Աշխատանքային հեռախոսը (արաբագիտության ամբիոն)՝
060 710582
Անհատական և խմբային խորհրդատվությունների
կազմակերպումը՝
Համալսարանում՝ դասաժամի օրը, նախնական
պայմանավորվածությամբ
Առցանց՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցում դասընթացի խմբում
<https://www.facebook.com/groups/1616127695277966/>

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Ուսումնական տարվա աշնանային և գարնանային կիսամյակներում հաջորդաբար իրականացվող երկու ուսումնական մոդուլներից բաղկացած դասընթացն առաջարկում է մասնագիտական անզլալեզու գրականության մի շարք ընտրված աշխատանքների և հետազոտությունների ուսումնասիրություն:

Հատուկ ուշադրություն է դարձվում արևմտյան առավել հայտնի արևելագետ-իսլամագետների՝ մուսուլմանական քաղաքակրթության առաջացման և զարգացման փուլերի մասին դրույթների և պատկերացումների վերլուծությանը: Դասընթացի նպատակն է զարգացնել ուսանողների մոտ անզլալեզու մասնագիտական գրականությունից օգտվելու, ուսումնասիրվող թեմաները վերլուծելու և ներկայացնելու հմտությունները:

Դասընթացն ենթադրում է ուսումնասիրվող խնդիրներին վերաբերող վիդեո և աուդիո նյութերի, զեկույցների, հարցազրույցների և այլ ուսումնաօժանդակ նյութերի զանազան լսարանային քննարկումներ: Ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծած խմբում դասընթացում ներգրավված բոլոր ուսանողները հնարավորություն են ստանում քննարկել իրենց հետաքրքրող հարցերը, ինչպես նաև փոխանակել առարկային առնչվող նյութեր:

2. ԱՌԱՋԻՆ ՄՈԴՈՒԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Թեմատիկ բովանդակության բաշխումն ըստ շաբաթների	Դասավանդման ձևը	Ուսումնառության եղանակը	Գնահատման ձևը
<p><u>Շաբաթ 1</u> Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Առարկայի ներածում:</p>	Ներածական դասախոսություն	Ծրագրի ընթերցում: Հարցերի ձևավորում: Խնդիրների առաջադրում:	<u>Ընթացքի գնահատում</u> Բանավոր հարցում:
<p><u>Շաբաթ 2</u> The Classification of the Sciences according to the <i>Rasa'il Ikhwan al-Safa'</i></p>	Լսարանային քննարկում:	Հանձնարարված գրականության ընթերցում:	<u>Ընթացքի գնահատում</u> Քննարկում:
<p><u>Շաբաթ 3</u> Greek into Arabic: Neoplatonism in translation</p>	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Լսարանային քննարկում:	<u>Ընթացքի գնահատում</u> Բանավոր հարցում:
<p><u>Շաբաթ 4</u> Interests, Ideas, and Islamist Outreach in Egypt</p>	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Լսարանային քննարկում: Դասախոսության նյութի և հանձնարարված	<u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ: Ճեպաթերթիկ: Համացանցային քննարկում:

		գրականության ընթերցում:	
<u>Շաբաթ 5</u> Iran's Strategic Predicament	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Դասախոսության ն նյութի և հանձնարարված գրականության ընթերցում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շաբաթ 6</u> Նախապատրաստում քննական ներկայացումների ն և բանավեճին:	Լսարանային աշխատանք: Ներկայացումների ի հարցադրումների ի ձևավորում:	Մասնակցություն ն լսարանային աշխատանքին: Քննական ներկայացումների ի պլանավորում:	<u>Ընթացքի գնահատում</u> Նախապատրաստական մշակումների (կոնսպեկտների ի) գնահատում:
<u>Շաբաթ 7</u> Role of the Religion in Contemporary Muslim Communities.			<u>Վերջնարդյուն- քի գնահատում</u> Բանավոր ներկայացումների գնահատում:
<u>Շաբաթ 8</u> Քննության արդյունքների վերլուծություն:	Հետքննական սեմինար:	Քննական արդյունքների ինքնավերլուծու թյուն:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն
<u>Շաբաթ 9</u> Կուրսային նախագծերի պլանավորում:	Լսարանային ներկայացում: Թեմաների ընտրություն:	Առաջադրված թեմաների քննարկում: Խմբերի ձևավորում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:

<u>Շարաթ 10</u> Religious and Secular in Contemporary Arab Life	Քննարկում թեմայի շուրջ:	Բովանդակային հարցերի պարզաբանում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հարցախույզ:
<u>Շարաթ 11</u> Islam and Secular state: Negotiating the Future of Shari'a:	Դասախոսություն: Լսարանային քննարկում:	Ընթացիկ հարցադրումներ:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շարաթ 12</u> Egypt's Revolutionary Youth: From Street Politics to Party Politics	Դասախոսություն: Լսարանային քննարկում	Ընթացիկ հարցադրումներ:	<u>Ընթացքի գնահատում</u> Բանավոր ներկայացում:
<u>Շարաթ 13</u> NASSERISM - The Prince and the Pharaoh.	Լսարանային քննարկում:	Մասնակցություն և լսարանային քննարկմանը:	<u>Ընթացքի գնահատում</u> Ճեպաթերթիկ:
<u>Շարաթ 14</u> Meccan Trade and the Rise of Islam.	Լսարանային քննարկում:	Բովանդակային հարցերի պարզաբանում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շարաթ 15</u> Role of Trade and Rise of Islam.			<u>Վերջնադրույնը ի գնահատում</u> Լսարանային շարադրության

			կատարում:
Շարաթ 16 Քննության արդյունքների վերլուծություն:	Հետքննական սեմինար:	Քննական արդյունքների ինքնավերլուծու- թյուն	<u>Ընթացքի</u> <u>գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն
<u>Քննաչրջանի</u> <u>համապատասխ</u> <u>ան շարաթ</u> Interpreting Islam in Modern Context			<u>Վերջնարդյու</u> <u>նքի</u> <u>գնահատում</u> Լսարանային շարադրանք:

2.1. ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարաթ 1

Արևելյան և արևմտյան արևելագետների դրույթների համեմատական վերլուծություն: Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Ժամանակակից արևմտյան իսլամագետների ուսումնասիրությունների ներկայացում, քննարկվող գրականության ընտրություն, վիդեո և աուդիո նյութերի բաշխում:

Շարաթ 2

The Classification of the Sciences according to the *Rasa'il Ikhwan al-Safa'*

10-րդ դարում (իսլամի 4-րդ դարում) Իրաքի Բասրա քաղաքում գործում էր մի խմբակ («եղբայրություն»), որի մասին շատ քիչ տեղեկություն է հայտնի: Հայտնի է, որ Իսվան ալ-Սաֆայի անդամները հարել են իսլամի լականությանը:

Եղբայրության անդամները թողել են հսկայական քանակությամբ և իրենից մեծ արժեք ներկայացնող, այսպես կոչված «ուղերձներ»: Այդ

«ուղերձները» հանրագիտարան են հիշեցնում, որտեղ առկա է այն ժամանակվա բոլոր գիտությունների վերաբերող տեղեկություն: Այդ հսկա աշխատությունը բաղկացած է 51 կամ 52 բաժիններից:

- De Callatay, Godefroid., *The Classification of the Sciences according to the rasa'il Ikhwan al-Safa'*, The Institute of Ismaili Studies, 2003
- Fakhry, Majid. *A history of Islamic Philosophy. Second Edition.* New York: Columbia University Press, 1983.
- Netton, I.R. *Muslim Neoplatonists: An Introduction to the Thought of the Brethren of Purity (Ikhwan al-Safa')*. London: Allen & Unwin; 1982.

Շարք 3

Greek into Arabic: Neoplatonism in translation.

Արաբամուսուլմանական նվաճումների արդյունքում ստեղծվել էր մի կայսրություն, որ իր մեջ էր ներառում գիտական հսկայական ժառանգություն, որի միջուկը կազմում էր անտիկ գիտական և փիլիսոփայական միտքը: Այն ասիական տարածաշրջան էր ներմուծվել Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումների շնորհիվ: Այդ ողջ գիտական և փիլիսոփայական ժառանգությունը, ինչպես նաև ավելի ուշ ձևավորված նեոպլատոնական շրջանի հեղինակների աշխատություններ սկսեցին թարգմանվել արաբերեն և որոշիչ նշանակություն ունեցան արաբամուսուլմանական միջավայրում գիտական և փիլիսոփայական մտքի ձևավորման և զարգացման գործում:

- Adamson, Peter and Taylor, Richard C. *The Cambridge Companion to Arabic Philosophy.* Cambridge: Cambridge University Press, 2005. See especially:
- Christina D'Ancona, 'Greek into Arabic: Neoplatonism in Translation' (Chapter 2).

- □- Walker, Paul E. 'The Ismā'īlis' (Chapter 5).
- Amin Razavi, M. *Suhrawardi and the School of Illumination*. Richmond: Curzon, 1997.
- Walzer, R. 'Aflatun' [Plato]. *Encyclopedia of Islam*. Leiden: Brill, vol. 1: 234-5, 1960.

Շարք 4

Interests, Ideas, and Islamist Outreach in Egypt

Եգիպտոսում իսլամական հոսանքների ակտիվացումը սկսվում է 1980-1990թթ. և, գլխավորապես, կապված է «Մուսուլման եղբայրություն» կազմակերպության հետ: Կազմակերպության անդամները, որպես կանոն, գործում են երիտասարդության շրջանում՝ համալսարաններում, որտեղ մշտապես առկա է երիտասարդների հոծ զանգված: Վերջիններս բավական հեշտ են հավաքագրվում և համալրում կազմակերպության շարքերը: Դրա շնորհիվ լուծվում են նաև վերջիններիս անհանգստացնող շատ հարցեր՝ ինչպես անձնական, այնպես էլ աշխատանքի հետ կապված:

- Richards, Alan, and John Waterbury, *A Political Economy of the Middle East*. Boulder: Westview, 1996
- Wiktorowicz, Quintan, and Suha Taji-Farouki, Islamic Non-Governmental Organizations and Muslim Politics: A Case from Jordan. *Third World Quarterly* 21, 4, 2000
- Wiktorowicz, Quintan, *Islamic Activism: A Social Movement Theory Approach*, Indiana University Press, 2004

Շարք 5

Iran's Strategic Predicament

1978-79թթ. Իրանում իսլամական հեղափոխության արդյունքում տապալվեց միապետությունը և իշխանության եկավ այաթոլլահ Ռուհոլա Խոմեյնին: Հեղափոխությունից հետո Իրանի հարաբերությունները Արևմուտքի, և մասնավորապես ԱՄՆ-ի հետ,

բավական սրվեցին: Իրանի նկատմամբ սկսեցին կիրառվել պատժամիջոցներ, որոնք մեծապես ազդում էին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Երկում վերանում է մասնավոր գործունեությունը, ինչի հետևանքով շատ իրանցի գործարարներ ստիպված եղան լքել երկիրը:

Նախագահներ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի և Մուհամմադ Խաթամիի ղեկավարման տարիներին որոշակի մեղմացում նկատվեց Արևմուտքի հետ հարաբերություններում, սակայն դրանք կրկին լարվեցին, երբ Իրանում նախագահ դարձավ Մահմուդ Ահմադինեջադը:

-
- Shahram Chubin, Iran's Strategic Predicament, *Middle East Journal*, Vol. 54, No. 1, 2000
 - Heidari, M.: Identity and national security. In: Alikhani, A.A. (ed.) *Identity in Iran*. Tehran, 2004
 - Kachoyan, H.: *Evolution of Identity Discourses in Iran*. Nei Publication, Tehran, 2005

Շարաթ 10

Religious and Secular in Contemporary Arab Life

Կրոնական գործոնի դերի և նշանակության փոփոխությունը արաբական հասարակական և քաղաքական կյանքում: Հիմնական շեշտադրումը կատարվում է ազգայնական ռեժիմների օրոք կրոնական գործոնի շահարկման և մանիպուլյացիայի վրա: Քննարկման են ենթարկվում լիբերալ և ռազմական ազգայնական ռեժիմների գաղափարական հիմքերը:

-
- Aziz al-Azmeh, *Religious and Secular in Contemporary Arab Life, Islams and Modernities*, Cambridge University Press, 1993
 - Nazik Saba Yared, *Secularism and the Arab World (1850-1939)*, London:

Saqi Books, 2002

- Degui Cai, ed., Contemporary Islamic-Arab Philosophy, Beijing: Renmin Publishing House, 2001

Շարաթ 11

Islam and Secular state: Negotiating the Future of Shari'a

Քննարկման են առնվում ան-Նաիմի շարիայի վերաբերյալ մոտեցումները, որոնք ձևավորվել էին դեռևս 1960-ական թթ., երբ նա Խարթումի համալսարանի իրավաբանության ֆակուլտետի ուսանող էր: Թեման կենտրոնանում է շարիայի հասարակական դերի վրա: Վերլուծության է առնվում հեղինակի Իսլամական աղբյուրների վերընթերցման մեթոդաբանությունը և ներկայացվում ոչ կրոնական պետության տեսլականը:

-
- Ahmed An-Na`im, Islam and the Secular State: Negotiating The Future of Shari`a, Harvard University Press, 2008
 - Ahmed An-Na`im, Toward an Islamic Reformation: Civil Liberties, Human Rights and International Law. Syracuse University Press, 1990
 - John L. Esposito, Azzam Tamimi, Islam and Secularism in the Middle East, NYU Press, 2000

Շարաթ 12

Egypt's Revolutionary Youth: From Street Politics to Party Politics

Երիտասարդական շարժումները, որոնք հանգեցրեցին 2011թվ, հունվարի 25-ի Եգիպտոսում հեղափոխությանը այսօր ակտիվ չեն: Ներկայումս դրանք ինստիտուցիոնալիզացիայի փուլում են: Հոդվածում հեղինակը քննարկում է այդ շարժումների ինստիտուցիոնալիզացիայի գործընթացը, ներկայացնում այն

միջոցները, որով այդ շարժումները փորձում են փողոցային՝ քաղաքականությունից անցում կատարել համակարգային քաղաքականություն:

- Nadine AbdallaAhmed, *Egypt's Revolutionary Youth From Street Politics to Party Politics*, German Institute for International and Security Affairs, 2013
- Mia Gröndahl, *Revolution Graffiti: Street Art of the New Egypt*, American University in Cairo Press, 2012
- Mohammed el-Nawawy, Sahar Khamis, *Egyptian Revolution 2.0: Political Blogging, Civic Engagement, and Citizen Journalism*, Palgrave Macmillan, 2013

Շարք 13

NASSERISM - The Prince and the Pharaoh.

The Collaborative Project of Egyptian Workers and Their Intellectuals in the Face of Revolution.

Brecht de Smet-ի ներկայացումները Նասերի ռեժիմի հաստատման պատմության և ազգային սուվերենության նկատմամբ Նասերական գաղափարախոսության մոտեցումների մասին: Քննարկվում է Նասերականության գաղափարական հիմքերը և քաղաքական ու գաղափարական մրցակցությունը Մուսուլման եղբայրների հետ:

- Brecht de Smet, CHAPTER 8 NASSERISM - The Prince and the Pharaoh. *The Collaborative Project of Egyptian Workers and Their Intellectuals in the Face of Revolution*, 2014
- Choueiri, Youssef M, *Arab nationalism: a history: nation and state in the Arab world*. Wiley-Blackwell, 2000
- Mansfield, Peter, *Nasser and Nasserism*, International Journal (Canadian International Council) 28 (4), 1973
- Ajami, Fouad, *On Nasser and His Legacy*, Journal of Peace Research (Sage Publications, Ltd.) 11 (1), 1974

Շարաթ 14

Meccan Trade and the Rise of Islam

Հողվածում պրոֆ. Կրոնը ներկայացնում է առկա Իսլամական ավանդական աղբյուրների իր ընթերցումը և վերլուծությունը: Նա քննարկման է դնում այն հարցը, որ եթե Մեքքացիները միջնորդ են եղել առևտրում, ապա այդ մասին հիշատակումներ պետք է լինեն նրանց հաճախորդների աղբյուրներում, որոնք նրանք հումք էին մատակարարում: Հեղինակը առաջ է քաշում այն հիպոթեզը, որ Մուհամադի գործունեությունը սկսել է ոչ թե հարավ արևմտյան Արաբիայում, այլ հյուսիս արևմտյան Արաբիայում:

- Patricia Crone, Meccan Trade and the Rise of Islam, Gorgias Press LLC, 2004
- Nayef R.F. Al-Rodhan, The Role of the Arab-Islamic World in the Rise of the West: Implications for Contemporary Trans-Cultural Relations, Palgrave Macmillan, 2012
- K. N. Chaudhuri, Trade and Civilisation in the Indian Ocean: An Economic History from the Rise of Islam to 1750, Cambridge University Press, 1985

3. ԵՐԿՐՈՐԴ ՄՈԴՈՒԼԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ

Թեմատիկ բովանդակության բաշխումն ըստ շարքների	Դասավանդման ձևը	Ուսումնառության եղանակը	Գնահատման ձևը
<p><u>Շարաթ 1</u> Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Առարկայի ներածում:</p>	<p>Ներածական դասախոսություն</p>	<p>Ծրագրի ընթերցում: Հարցերի ձևավորում: Խնդիրների առաջադրում:</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Բանավոր հարցում:</p>

<p><i>Շարաթ 2</i></p> <p>How Islamic is Islamic State?</p>	<p>Լսարանային քննարկում:</p>	<p>Հանձնարարված գրականության ընթերցում:</p>	<p><i>Ընթացքի գնահատում</i></p> <p>Քննարկում:</p>
<p><i>Շարաթ 3</i></p> <p>Fulfilling Prophecies: State Policy and Islamist Radicalism</p>	<p>Դասախոսություն: Լսարանային քննարկում:</p>	<p>Լսարանային քննարկում:</p>	<p><i>Ընթացքի գնահատում</i></p> <p>Բանավոր հարցում:</p>
<p><i>Շարաթ 4</i></p> <p>The Power of Commerce</p>	<p>Դասախոսություն: Լսարանային քննարկում:</p>	<p>Լսարանային քննարկում: Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ընթերցում:</p>	<p><i>Ընթացքի գնահատում</i></p> <p>Հարցախույզ: Ճեպաթերթիկ: Համացանցային քննարկում:</p>
<p><i>Շարաթ 5</i></p> <p>Gendering Islamophobia and Islamophilia: The Case of Shi'i Muslim Women in Lebanon</p>	<p>Դասախոսություն: Լսարանային քննարկում:</p>	<p>Դասախոսության նյութի և հանձնարարված գրականության ընթերցում:</p>	<p><i>Ընթացքի գնահատում</i></p> <p>Հետադարձ կապ-վերլուծություն:</p>
<p><i>Շարաթ 6</i></p> <p>Նախապատրաստում քննական ներկայացումներին և բանավեճին:</p>	<p>Լսարանային աշխատանք: Ներկայացումների հարցադրումների ձևավորում:</p>	<p>Մասնակցություն լսարանային աշխատանքին: Քննական ներկայացումների պլանավորում:</p>	<p><i>Ընթացքի գնահատում</i></p> <p>Նախապատրաստական մշակումների (կոնսպեկտների) գնահատում:</p>
<p><i>Շարաթ 7</i></p> <p>Marriage, Money and Divorce in Medieval Islamic Society.</p>			<p><i>Վերջնարդյուն-քի գնահատում</i></p> <p>Բանավոր ներկայացումների գնահատում:</p>

<u>Շարաթ 8</u> Քննության արդյունքների վերլուծություն:	Հետքննական սեմինար:	Քննական արդյունքների ինքնավերլուծությո ւն:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն
<u>Շարաթ 9</u> Կուրսային նախագծերի պլանավորում:	Լսարանային ներկայացում: Թեմաների ընտրություն:	Առաջադրված թեմաների քննարկում: Խմբերի ձևավորում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շարաթ 10</u> Pillars of Practice	Տեսանյութի դիտում:	Բովանդակային հարցերի պարզաբանում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շարաթ 11</u> Islam, Gender and the West	Տեսանյութի դիտում: Լսարանային քննարկում:	Ընթացիկ հարցադրումներ:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շարաթ 12</u> Western Muslims & Human Rights	Տեսանյութի դիտում: Լսարանային քննարկում:	Բովանդակային հարցերի պարզաբանում:	<u>Ընթացքի գնահատում</u> Բանավոր ներկայացում:
<u>Շարաթ 13</u> Muslims and the Nation-State. Politics of Stereotyping	Լսարանային քննարկում:	Մասնակցություն լսարանային քննարկմանը:	<u>Ընթացքի գնահատում</u> Ճեպաթերթիկ:
<u>Շարաթ 14</u> How Islamic is Islamic State?	Լսարանային քննարկում:	Բովանդակային հարցերի պարզաբանում:	<u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ- վերլուծություն:
<u>Շարաթ 15</u> Theo Van Gogh, “Submission”			<u>Վերջնարդյունքի գնահատում</u> Լսարանային շարադրության կատարում:

<p><u>Շարաթ 16</u> Քննության արդյունքների վերլուծություն:</p>	<p>Հետքննական սեմինար:</p>	<p>Քննական արդյունքների ինքնավերլուծություն</p>	<p><u>Ընթացքի գնահատում</u> Հետադարձ կապ-վերլուծություն</p>
<p><u>Քննաշրջանի համապատասխան շարաթ</u> Interpreting Islam in Modern Context</p>			<p><u>Վերջնարդյունքի գնահատում</u> Լսարանային շարադրանք:</p>

3.1. ՄՈԴՈՒԼԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարաթ 1

Արևելյան և արևմտյան արևելագետների դրույթների համեմատական վերլուծություն: Դասընթացի ծրագրի ներկայացում և ուսումնական գործողությունների պլանավորում: Ժամանակակից արևմտյան իսլամագետների ուսումնասիրությունների ներկայացում, քննարկվող գրականության ընտրություն, վիդեո և աուդիո նյութերի բաշխում:

Շարաթ 2

How Islamic is Islamic State?

Մեհդի Հասանը պնդում է որ Ղուրանը չի կարող մեղադրվել քաղաքական բռի ծայրահեղության համար: Իր ընդարձակ գեկուցման մեջ Մեհդի Հասանը գրում է որ «Իսլամական պետության» մոտիվները քաղաքական են այլ ոչ կրոնական: Այն հարցով թե արդյոք ԻԼԻՊ-ը «պաշտոնապես «իսլամական» շարժում է կրոնով ու հավատով ոգեշնչված մարտիկներով» Հասանը հարցում է անցկացնում բավականին շատ մասնագետների այդ թվում դատական հոգեբույժ Մարկ Մեյզմանին, Ռիչարդ Բարետին, նախկին զինվորական Մուբին Շեյխին: Եվ հասանը այն եզրահանգման է գալիս որ կրոնը շատ քիչ

դեր է խաղում կազմակերպության ծայրահեղականացման մեջ եթե այն իհարկե ընդհանրապես դեր ունի նրանում: Ինչպես որ Սեյգմանը և շատ ու շատ փորձագետներ նշում են «դա ավելի շատ արդարացում է քան պատճառ... պնդել թե ԻԼԻՊ-ը իսլամական է շատ սխալ և էմպիրիկ անկայուն է, չհաշված դեռ աշխարհում 1,6 բիլիոնի հասնող խաղաղ մուսուլմանների նկատմամբ վատ տրամադրվելն ու նրանց վիրավորելը» :

- Mehdi Hasan: How Islamic is Islamic State?
<http://www.newstatesman.com/world-affairs/2015/03/mehdi-hasan-how-islamic-islamic-state>
- Graeme Wood. What ISIS Really Wants.
<http://www.theatlantic.com/features/archive/2015/02/what-isis-really-wants/384980/>
- Cole Bunzel, From Paper State to Caliphate: The Ideology of the Islamic State:
<http://www.brookings.edu/~media/research/files/papers/2015/03/ideology-of-islamic-state-bunzel/the-ideology-of-the-islamic-state.pdf>

Շարաթ 3

Fulfilling Prophecies: State Policy and Islamist Radicalism.

Էսսեն քննարկում և ուսումնասիրում է Մերձավոր Արևելքում ընդդիմադիր շարժումների նպատակների ու մեթոդների անօրինականության պատճառներն ու հետևանքները քաղաքական հաստատություններ ու շարժումներ ընդհանուր հասկացության լույսի ներքո: Հեղինակը սկսում է նախ նկարագրել այն պայմաները որում այդ ընդդիմությունը ի հայտ եկավ, հետո ճանաչումը թեև ոչ պաշտոնական այնուհետև անցում է կատարում քմահաճ կառավարությունների քաղաքականության ազդեցությանը իրենց

քաղաքական ընտրողների և գաղափարական պլատֆորմների վրա:

- Lisa Anderson, Fulfilling Prophecies: State Policy and Islamist Radicalism, in Political Islam: Revolution, Radicalism, or Reform?, ed. John L. Esposito (Boulder, CO: Lynne Rienner), 1997
- Sidney Tarrow, Power in Movement: Social Movements and Contentious Politics, 2nd ed., New York: Cambridge University Press, 1998
- Maidul Islam, Limits of Islamism, Cambridge University Press, 2015

Շարաթ 4

The Power of Commerce

Քննարկվում է Իրանի դերի աստիճանաբար աճը տարածաշրջանում շնորհիվ ոչ միայն իր բնական այլև մարդկային ռեսուրսների: Իրանը զենքով ու գումարով է ապահովում այնպիսի ահաբեկչական կազմակերպությունների ինչպիսիք են Հիզբալլահը, Համասը ինչը հնարավորություն է տալիս Իրանին իր ազդեցությունը ունենալն աս այս կազմակերպությունների վրա: Սակայն դրա հետ մեկտեղ Իրանի ազդեցությունը առավել հեռանկարային և ավելի ամուր է այն երկրներում որտեղ նա ունի տնտեսական ազդեցություն և այդ երկրներն են մասնավորապես հինգ ստանները: Խոսվում է իսլամական կապիտալիզմի և ֆինանսական համակարգի մասին ընդգծելով որ ներկայումս իսլամը դարձել է բիզնես և հալալ ու հարամի տակ բազմաթիվ գործարքներ են կատարվում:

- Vali Nasr The Rise of Islamic Capitalism: Why the New Muslim Middle Class Is the Key to Defeating Extremism, Council on Foreign Relations Books, 2010
- Anouar Majid, Islam and America: Building a Future Without Prejudice, Rowman & Littlefield, 2012
- Wiktorowicz, Quintan, Islamic Activism: A Social Movement Theory Approach, Indiana University Press, 2004

Շարաթ 5

Gendering Islamophobia and Islamophilia: The Case of Shi'i Muslim Women in Lebanon

Նկարագրվում և քննարկման են առնվում գենդերայնության, իսլամի և քաղաքակրթական ստատուսին վերաբերող զանազան խնդիրները: Խոսվում է Հիզբալլահի կանանց ժողովի և վերջինիս նորարարությունների մասին, ինչպես նաև տարբեր աղապտացիոն մեխանիզմների տեսակետներ են քննարկվում: Որպես ամփոփում վերլուծվում է շիայաֆոբիայի երևույթը, որը, կարծես, նոր շերտ է՝ իսլամոֆոբիային ավելացրած, երբ խոսվում է Լիբանանի մասին:

-
- Andrew Shryock, Islamophobia/Islamophilia: Beyond the Politics of Enemy and Friend, Indiana Series in Middle East Studies, 2010
 - Abdulkader H. Sinno, Muslims in Western Politics, Indiana University Press, 2008
 - Douglas Murray, Islamophilia, Kindle Edition, Published by: emBooks, 2013

Շարաթ 10

Pillars of Practice

Համգա Յուսուֆը դասախոսում է Իսլամի թեմայով, կենտրոնանալով իսլամի հիմնասյունների վրա՝ բացառությամբ շահաղայի: Նախ նա կարդում է Ղուրանի մի քանի այաներ որոնք որ կապ ունեն «իսլամ» բառի հետ փորձելով տալ դրա իմաստը ըստ դուրանական այանների: Եվ առանձնացնում է չորս իմաստ՝ բոլոր արարածները հնազանդ են, իսլամը ուղեցույց է մարգարենների կողմից, իսլամը որպես Մուհամմադ մարգարեի կրոն և մահ: Այնուհետև նա մանրամասնորեն խոսում է չորդ հիմնասյունների մասին՝ սալաթ, զաքաթ, սաում և հաջ:

-
- Shaykh Hamza Yusuf - Pillars of Practice - Part 1 of 2,

Շարքաթ 11

Islam, Gender and the West

Ջորջթաունի համալսարանի պրոֆեսոր՝ Իվոն Հադդադը, քննարկում է իսլամի ինտելեկտուալ, սոցիալական եւ քաղաքական պատմությունը արաբական աշխարհում: Ադրադարձ է կատարվում Հյուսիսային Ամերիկայում և Արևմուտքում իսլամական հեղափոխական շարժումների պատմությանը:

-
- <https://www.youtube.com/watch?v=vT-KVi8F1AE> (part1)
 - <https://www.youtube.com/watch?v=TmvCOjKMLnY> (part2)

Շարքաթ 12

Western Muslims & Human Rights: An Alternative Framework?

Պրոֆեսոր Շերման Ջեքսոնի հետազոտական հետաքրքրությունների շրջանակը բավականին լայն է՝ պետությանը և իսլամական օրենքին վերաբերող հարցերից մինչև հանդուրժողականություն և սևամորթ մուսուլման ամերիկացիներ:

Նրա վերջին ուսումնասիրությունը նվիրված է այն խնդրին, թե ինչպես դասական իսլամական աստվածաբանությունը մեկնաբանվում է ժամանակակից Ամերիկայում:

-
- <https://www.youtube.com/watch?v=IQAMUB2PjJA>

Շարքաթ 13

Muslims and the Nation-State. Politics of Stereotyping

Մուսուլմանների դեմ գործի դրվող բռնությունները, իսլամական ավանդույթի հանդեպ թույլ տրվող ակնհայտ իրավախախտումները

կարող են որակվել որպես ռասիզմ, նացիոնալիզմ, աշխարհիկ կամ հակազաղթական գործողություններ: Իսլամաֆոբիան, որպես մեկ ամբողջական կոնցեպտ, ի հայտ է բերում այս բոլոր որակումները մեկ միասնական պատկերում, ինչն էլ հանգեցնում է ձևավորվող բազմաթիվ կարծրատիպերի: Աշխարհընկալման հետևյալ պատկերն այնքան ընդհանրական է, որ ընդհանրանում են նաև կարծրատիպերը. Մուսուլմանները դիտվում են որոպես ահաբեկիչներ, էքստրեմիստներ, հակասեմական և հակաքրիստոնեական տարրեր, որոնց շարքում բացակայում է ժողովրդավարությունը, կնոջ իրավունքների պաշտպանությունը, հետադիմական են և նվիրում են իրենց կյանքը ամբողջ աշխարհում իսլամական օրենքը հաստատելուն; Եվրոպայի և ԱՄՆ-ի ձևավորած կարծրատիպերի քաղաքականությունը առաջ է բերում Արևմուտքում բնակվող միլիոնավոր մուսուլմանների քաղաքացիական ազատությունների և իրավունքների հանդեպ սպառնալիքներ: Նրանք նաև սպառնալիքի տակ են դնում մուսուլմանական պետությունների անվտանգությունը:

-
- Framing Muslims: Stereotyping and Representation After 9/11, Peter Morey, Amina Yaqin, Harvard University Press, 2011
 - Geneive Abdo, Mecca and Main Street : Muslim Life in America after 9/11: Oxford University Press, USA, 2006
 - Mahmood Mamdani, Good Muslim, Bad Muslim: America, the Cold War, and the Roots of Terror, Potter/TenSpeed/Harmony, 2005
 - Arshad Khan, Islam, Muslims, and America: Understanding the Basis of Their Conflict, Algora Publishing, 2003

Շարքաթ 14

How Islamic is Islamic State?

Դժվար է մոռանալ անուններն ու պատկերներն այն մարդկանց, ովքեր 2014թ. օգոստոսից նոյեմբեր ամիսներին դարձան Իսլամական պետության զոհ ողջ մարդկության առաջ հրապարակված տեսանյութերում: Փորձ է կատարվում ներկայացնել իսլամական պետության քաղաքական և կրոնական գաղափարախոսության, գործողությունների ընդհանուր տեսանկյուններ, որոնց մասին պատմում են CNN-ի այն լրագրողները, որոնք աշխատել են իսլամական պետության տարածքներում:

-
- <http://www.newstatesman.com/world-affairs/2015/03/mehdi-hasan-how-islamic-islamic-state>
 - <http://www.timesofisrael.com/how-islamic-is-islamic-state-group-not-very-experts-say/>
 - <http://www.theatlantic.com/features/archive/2015/02/what-isis-really-wants/384980/>
 - <http://www.bbc.com/news/world-middle-east-29052144>
 - <http://kdvr.com/2015/07/06/isis-facts-and-timeline/>

4. Ընթացիկ քննությունների բովանդակությունը և միավորների սանդղակը

Դասընթացի գնահատման համակարգը նախատեսում է երկու ընթացիկ քննությունների անցկացում՝ բանավոր և գրավոր, որոնց հիմնական նպատակը՝ դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքներին հասնելու ընթացքի գնահատումն է: Յուրաքանչյուր քննության համար՝ համալսարանում գործող կարգին համապատասխան նախատեսված է 4 միավորի սանդղակ: Ուսանողի մասնակցության աստիճանը դասընթացին գնահատվում է 2 միավորի սանդղակով: Դասընթացի եզրափակիչ քննությունը գրավոր է և գնահատվում է 10 միավորի սանդղակով:

Ուսանողի՝ դասընթացին մասնակցության աստիճանի

գնահատումը

Համալսարանում գործող կարգի համաձայն, ուսանողի՝ դասընթացին մասնակցելու աստիճանը գնահատվում է սույլ դասաժամերին ուսանողի ներկայության հաշվառման տվյալների հիման վրա: Ներկայության 90-ից – 100 տոկոսը գնահատվում է 2 միավորով, 80-ից – 90 տոկոսը՝ 1 միավորով, իսկ ներկայության ավելի ցածր աստիճանը թվանշվում է 0 միավորով:

Առաջին ընթացիկ քննությունը

Առաջին միջանկյալ քննությունը անց է կացվում դասընթացի 7-րդ շաբաթվա ընթացքում և նախատեսում տրված հարցերով լսարանային շարադրանքի կատարում: Քննական առաջադրանքների բովանդակությունը՝

- 1) ուսումնասիրած տեսական գրականության հիմնակետերի շուրջ տրված հարցերի լուսաբանում (2 միավոր).
- 2) տրված թեմատիկ նյութի բանավոր ներկայացում (2 միավոր):

Երկրորդ ընթացիկ քննությունը

Երկրորդ միջանկյալ քննությունն անց է կացվում դասընթացի 15-րդ շաբաթվա ընթացքում և պարունակում տրված թեմատիկ առաջադրանքի գրավոր ներկայացում (4 միավոր):

Եզրափակիչ քննությունը

Եզրափակիչ քննությունը անց է կացվում քննաշրջանի համապատասխան շաբաթվա ընթացքում և բաղկացած է դասընթացի ընթացքում լուսաբանված խնդիրների վերաբերյալ երկու բանավոր հարցերից, որիցից ամեն մեկը գնահատվում է առավելագույնը 5 միավորով: Քննություններից հետո ուսանողներին հարցաշար է

ուղարկվում՝ հասկանալու համար ինչ խնդիրներ են ունեցել նրանք քննությանը նախապատրաստվելիս, քննության ընթացքում, ինչպես են գնահատում առաջադրանքները և քննական միջավայրը:

5. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Adamson, Peter and Taylor, Richard C. *The Cambridge Companion to Arabic Philosophy*. Cambridge: Cambridge University Press, 2005. See especially:

Ahmed An-Na`im, *Islam and the Secular State: Negotiating*

Ahmed An-Na`im, *Toward an Islamic Reformation: Civil Liberties, Human Rights and International Law*. Syracuse University Press, 1990

Ajami, Fouad, *On Nasser and His Legacy*, *Journal of Peace Research* (Sage Publications, Ltd.) 11 (1), 1974

Amin Razavi, M. *Suhrawardi and the School of Illumination*. Richmond: Curzon, 1997.

Aziz al-Azmeh, *Religious and Secular in Contemporary Arab Life, Islams and Modernities*, Cambridge University Press, 1993

Brecht de Smet, CHAPTER 8 NASSERISM - The Prince and the Pharaoh. *The Collaborative Project of Egyptian Workers and Their Intellectuals in the Face of Revolution*, 2014

Choueiri, Youssef M, *Arab nationalism: a history: nation and state in the Arab world*. Wiley-Blackwell, 2000

Christina D'Ancona, 'Greek into Arabic: Neoplatonism in Translation' (Chapter 2).

De Callatay, Godefroid., *The Classification of the Sciences according to the rasa'il Ikhwan al-Safa'*, The Institute of Ismaili Studies, 2003

- Degui Cai, ed., *Contemporary Islamic-Arab Philosophy*, Beijing: Renmin Publishing House, 2001
- Fakhry, Majid. *A history of Islamic Philosophy*. Second Edition. New York: Columbia University Press, 1983.
- John L. Esposito, *Azzam Tamimi, Islam and Secularism in the Middle East*, NYU Press, 2000
- K. N. Chaudhuri, *Trade and Civilisation in the Indian Ocean: An Economic History from the Rise of Islam to 1750*, Cambridge University Press, 1985
- Kachoyan, H.: *Evolution of Identity Discourses in Iran*. Nei Publication, Tehran, 2005
- Mansfield, Peter, *Nasser and Nasserism*, *International Journal (Canadian International Council)* 28 (4), 1973
- Mia Gröndahl, *Revolution Graffiti: Street Art of the New Egypt*, American University in Cairo Press, 2012
- Mohammed el-Nawawy, Sahar Khamis, *Egyptian Revolution 2.0: Political Blogging, Civic Engagement, and Citizen Journalism*, Palgrave Macmillan, 2013
- Nadine AbdallaAhmed, *Egypt's Revolutionary Youth From Street Politics to Party Politics*, German Institute for International and Security Affairs, 2013
- Nayef R.F. Al-Rodhan, *The Role of the Arab-Islamic World in the Rise of the West: Implications for Contemporary Trans-Cultural Relations*, Palgrave Macmillan, 2012
- Nazik Saba Yared, *Secularism and the Arab World (1850-1939)*, London: Saqi Books, 2002
- Netton, I.R. *Muslim Neoplatonists: An Introduction to the Thought of the Brethren of Purity (Ikhwan al-Safa')*. London: Allen & Unwin; 1982.
- Patricia Crone, *Meccan Trade and the Rise of Islam*, Gorgias Press LLC, 2004

Richards, Alan, and John Waterbury, *A Political Economy of the Middle East*. Boulder: Westview, 1996

Shahram Chubin, Iran's Strategic Predicament, *Middle East Journal*, Vol. 54, No. 1, 2000

The Future of Shari`a, Harvard University Press, 2008

Walzer, R. 'Aflatun' [Plato]. *Encyclopedia of Islam*. Leiden: Brill, vol. 1: 234-5, 1960.

Wiktorowicz, Quintan, and Suha Taji-Farouki, Islamic Non-Governmental Organizations and Muslim Politics: A Case from Jordan. *Third World Quarterly* 21, 4, 2000

Wiktorowicz, Quintan, *Islamic Activism: A Social Movement Theory Approach*, Indiana University Press, 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Դասընթացի նպատակը..... 3
2. Անգլալեզու մասնագիտական գրականության վերլուծություն – 1 դասընթացի ուսումնական քարտեզը..... 4
3. Մոդուլի թեմաների համառոտագրություններ..... 7
4. Անգլալեզու մասնագիտական գրականության վերլուծություն – 2 դասընթացի ուսումնական քարտեզը..... 14
5. Մոդուլի թեմաների համառոտագրություններ.....16
6. Ընթացիկ քննությունների միավորների սանդղակը.....23
7. Լրացուցիչ գրականության ցանկ..... 24